նուագելիս՝ զի խաղաղութիւն լիցի՝ և մեկնեցաւ։

Իսկ ՚ի տօնի Վարդավառի, յերուսաղէմ ՚ի վաճառանոցն, փոքր մանուկ մի այլազգի, հարեալ յերիվարէ խմբէ մեռաւ անդէն. և ՚ի լինել քննութեան և դատաստանի, արկին զվնասն ՚ի վերայ Հայոց, որպէս թէ երիվարն իցէ վանաց Ս. Յակոբայ. և վասն այսր կրեցին միաբանք նեղութիւնս ոչ սակաւ։

Ի պատարագելն Հայոց ՚ի սեղանն Իւղաբերից ՚ի Ս. Յարութիւն, արկանէին սխուցս վասն դպրաց ՚ի հրապարակի անդ ըստ սովորութեան, որպէս գրեցաք յառաջադոյն. և ՚ի սմին ժամանակի Լատին կրօնաւորք դրդեալք ՚ի Յունաց՝ վերստին արգելին զայն և Գրիգոր Պատրիարք առաքեաց ՚ի վանս նոցա զԳաբրիէլ վարդապետ, և ծանոյց նոցա զհին սովորութիւնն զայն. եւ նոքա չաւին յանձն անսալ բանիւ Հայոց։ Իսկ Գրիգոր ետ բանալ զդուռն տաճարին, և ժողովեցան անդ և եղեւ վէճ երկար ՚ի վերայ այնր խնդրոյ ՚ի մէջ երկուց աղգաց. այլ Լատինք ոչ երբէք յանձն առին զիջանիլ ՚ի խնդիրս Հայոց, որ և խափանեցին զայն սովորութիւն։ Տեսեալ Գրիգորի Պատրիարքի զյամառ միտս նոցա, լռեաց, և չիշխեաց ասել զայլ ինչ. զի մի և նոքա զայրացեալ առաւել չարիս գործեսցեն։

Իսկ միաբանք Յունաց գրեցին առ Մէլեթիոս Պատրիարքն Իւրեանց, իբրու թէ Հայք միաբանեալ ընդ Լատինս կամին վչտացուցանել զՅոյնս. այլ Լատինք ոչ կարեն ստանանել ինչ նոցա, զկնի սահմանադրութեան, որ կատարեցաւ ՚ի դուռն Արքունի. բայց ՚ի ձեռն Հայոց նեղեն զմեզ, այս է այժմեան վրդովումն ՚ի միջի երկուց աղգաց. բայց մեք միշտ խաղաղութեամբ վարիմք ընդ նոսա, եւ ոչ երբէք կամիմք զխռովութիւն. եթէ պատահեսցի եւս երբեմն ՚ի մէջ լուսարարաց, և այն եւս չէ ինչ. որովհետեւ առաքեցին նոքա գիր ՚ի ձեռն Մկրտչի առ պատուելին Իւրեանց, յորմէ երեւի թէ ոչ սիրեն զխաղաղութիւն, այլ չարժին ՚ի խռովութիւն և ՚ի գայթակղութիւն միաբանեալ ընդ Լատինս, այս է պատճառ խռովութեան մերում. Մէլեթիոս առաքեաց զգիր միաբանց Իւրոց առ Յովհաննէս Պատրիարք՝ յղել զայն յերուսաղէմ, յորում խոստացեալ էին սիրով վարիլ ընդ Հայս։